



Բաց հասարակության հիմնադրամները, ակտիվորեն գործելով աշխարհի ավելի քան 70 երկրներում, օժանդակում են արդարադատության ու մարդու իրավունքների, խոսքի ազատության, հանրային առողջապահության և կրթության հասանելիության հարցում:

## Առողջապահություն

### Առանց ցավի ապրելը մարդու հիմնարար իրավունք է

Հայաստանում վերջերս գրանցված առաջընթացը պալիատիվ խնամքի ուղղությամբ

*“Ամենաշատն ուզում եմ նորից շարժվել կարողանալ, դուրս գնալ: Շարժվելիս շատ է ցավում: Փորձում եմ, սակայն հաճախ ցավն անտանելի է:”*

- *Էլեն, 14 տարեկան, տառապում է անկատար է օստեոգենեզով (ոսկրային հիվանդություն, որի ժամանակ տեղի ունենում ոսկրային կոտրվածքներ, նույնիսկ առանց տեսանելի պատճառի)*

Խոշտանգումը մարդու հիմնարար իրավունքների խախտում է, սա ոչ ոք չի կարող ժխտել: Սակայն տանջանքը միայն բռնության արդյունք չէ: Ամեն տարի ողջ աշխարհում միլիոնավոր մարդիկ տառապում են ցավից՝ զրկված լինելով համապատասխան դեղամիջոցներից: Պալիատիվ խնամքից և ցավազրկումից զուրկ հիվանդների ցավի ուժգնությունը կարող է ավելի հզոր լինել, քան ավանդական տանջանքներից պատճառված ցավը, և այն ավելի երկար կարող է տևել:

Կառավարությունները հաճախ սահմանափակում են էական նշանակություն ունեցող ցավազրկող դեղամիջոցների մատչելիությունը տարբեր անընդունելի պատճառներով, ինչպիսիք են կախվածության առաջացման

չափազանցված վախը, բժիշկներին պալիատիվ խնամքի վերաբերյալ չվերապատրաստելը, ինչպես նաև կամայական կանոնակարգը՝ մորֆինային հիմք ունեցող նյութերի հարցում: Մա անելով նրանք ոչ միայն վերահսկում են դեղանյութը, այլ նաև խախտում մարդու հիմնարար իրավունքը՝ առողջության իրավունքը:



Հայ ներկայացուցիչները Պալիատիվ խնամքի եվրոպական ասոցիացիայի 12-րդ համաժողովին, 2011թ. մայիս

## Այս համարում՝

### ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

• Առանց ցավի ապրելը մարդու հիմնարար իրավունք է  
Հայաստանում վերջերս գրանցված առաջընթացը պալիատիվ խնամքի ուղղությամբ

### ՔԱՂԱՔԱՏԻԱԿԱՆ ՀՄՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

• Parliamentmonitoring.am. Ազգային ժողովի քվեարկությունների տվյալները և կուսակցությունների՝ իրենց նախընտրական խոստումներին հավատարիմ մնալը ճշտելու նոր ինտերնետային կայք

### “ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԲԱՅ ՀՄՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ” ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅՈՒՆ

- Ընտրական օրենսգրքի փոփոխությունների շուրջ քննարկման մասնակիցները մտահոգություն են հայտնում ազատ և արդար ընտրությունների խոչընդոտների շուրջ
- Վարչական դատարանի մոնիթորինգի զեկույցը առաջարկներ է ներկայացնում օրենսդրական փոփոխությունների համար

### ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

• Սմարթֆոններն ավելի խելացի են դարձել...

### ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

• Տասը հասարակական կազմակերպություն կստանան աջակցություն՝ ռազմավարական դատավարության միջոցով քաղաքականության բարելավման համար

### ԼՐԱՏՎԱՍԽՉՈՑՆԵՐ

- ԲՀՀ - Հայաստանը աջակցում է բավանդակալից, խնդիրներից բխող ծրագրերի
- Լրատվամիջոցների դեմ դատական գործերի աճ, ըստ ԽՍԱՊԿ-ի եռամսյակային զեկույցի

### ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

• Պատանեկան բանավեճի մրցույթը նպաստում է քննադատական մտածողությանը և ճկուն ուսմանը

### ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎԵԼՔ ԾՐԱԳԻՐ

• Կույրերի համար վերականգնողական կենտրոն բացելու ուղղությամբ տարվող աշխատանքներ. Լեհաստանի և Վրաստանի փորձագետների այցը Հայաստան

### ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

- Գյուղացիական ութ կոոպերատիվներ ստանում են դրամաշնորհներ Ձինիշյանի հիշատակի հիմնադրամի և ԲՀՀ - Հայաստան գործընկերության միջոցով
- Ծամբարակի բարեգործական ճաշարանը կրկին բացում է իր դռները
- ԲՀՀ-Հայաստանը աջակցություն է տրամադրում պրոֆեսիոնալ կույր երաժիշտներին

### ANNOUNCEMENTS

• Call for Proposals: Strengthening Civil Society Through Arts & Culture

Անընդհատ աճող քաղցկեղի քանակը, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի համաճարակը, հիվանդներին ու նրանց ընտանիքներին մատուցվող խնամքի որակը պետք է դիտարկել որպես միջազգային հանրային առողջապահության խնդիր: Այսօր մորֆինը՝ մեդիկ միջև ուժեղ ցավն ամբողջ հիմնական դեղը, համեմատաբար էժան է և լայնորեն հասանելի, սակայն ամեն օր Հայաստանում և ողջ աշխարհում մարդիկ մահանում են սահմանցուցիչ ցավերից տանջվելով: Այս հարցը լուծելու համար ԲՀՀ - Հայաստանը և ԲՀՀ Պալիատիվ խնամքի նախաձեռնությունը հանդես են գալիս ի պաշտպանություն պալիատիվ խնամքի ներառմանն ազգային առողջապահության ծրագրերի և քաղաքականության մեջ:

Պալիատիվ խնամքը պրոգրեսիվ հիվանդություններով տառապող անձանց ակտիվ, ամբողջական խնամքն է: Այն կիրառում է հիվանդի խնամքի միջոցառումներին մոտեցում՝ հիմնվելով բժշկների, բուժքույրերի, սոցաշխատողների, հոգեբանների և այլ մասնագետների ներդրումների վրա՝ թեթևացնելով հիվանդների տառապանքները նրանց կյանքի բոլոր բնագավառներում: Քանի որ ցավի կառավարումը պալիատիվ խնամքի կարևոր բաղադրիչն է, առողջապահության այս բազմադրոս բնագավառը նաև անդրադառնում է զգացմունքային, հոգեկան և սոցիալական խնդիրներին, որոնք նույնպես առաջանում են պրոգրեսիվ հիվանդությունների պատճառով:

Մինչև վերջերս պալիատիվ խնամքը Հայաստանի առողջապահական համակարգում չէր դիտվում որպես առաջնային ոլորտ: 2009թ. ԲՀՀ - Հայաստանի օժանդակությամբ կատարվեց կարիքների գնահատում, որը բացահայտեց մտահոգիչ վիճակագրություն. երեք միլիոն բնակչության կտրվածքով օրական մոտ երեք հազար հոգի Հայաստանում պալիատիվ խնամքի կարիք ունի: Այնուհանդերձ, միայն Երևանում, որտեղ ապրում է երկրի բնակչության մոտ կեսը, օրական միայն 80-85 անձ է ստանում օփիոիդներ՝ (թմրաբեր ցավազրկողներ) ցավի կառավարման համար:

Ուսումնասիրությունը մեծ ուշադրություն առաջացրեց խնդրի հանդեպ՝ այն հիմնավորելով փաստերով: Բացի այդ, պալիատիվ խնամքի վերաբերյալ տեղեկությունների աճող մատչելիությունը մեծ դեր է խաղացել Հայաստանում այս ոլորտը խթանելու և խնդրով հետաքրքրված անձանց ընդգրկելու առումով: Շարժման մեջ ներգրավված միլիոնների ջանքերի շնորհիվ պալիատիվ խնամքը սկսել է գրավել հանրային քաղաքականություն մշակողների, առողջապահության ոլորտի մասնագետների և մարդու իրավունքների ակտիվիստների ուշադրությունը: Որպես այս ջանքերի անմիջական արդյունք՝ 2009թ. դեկտեմբերին Հայաստանի կառավարությունը պաշտոնապես ընդունեց պալիատիվ խնամքը որպես առողջապահության նոր ճյուղ:

ԲՀՀ - Հայաստանի և նոր կազմավորված Պալիատիվ խնամքի աշխատանքային խմբի օժանդակությամբ՝ Առողջապահության նախարարությունը մշակեց հանրային քաղաքականության փաստաթուղթ, հիմնեց պալիատիվ խնամքի վերապատրաստման կենտրոն՝ Ուռուցքաբանության հայկական ազգային կենտրոնում և մշակեց հավաստագրված դասընթաց՝ ցավի կառավարման և օփիոիդների մշակման թեմայով:

Այս գարնանը ԲՀՀ - Հայաստանն աջակցեց Առողջապահության նախարարության, պոլիկլինիկաների և համալսարանների

ներկայացուցիչներին՝ մասնակցելու Պալիատիվ խնամքի եվրոպական ասոցիացիայի 12րդ համաժողովին: Համաժողովը, որը տեղի ունեցավ Լիսաբոնում մայիսի 18-ից 21-ը, համախմբել էր պալիատիվ խնամքով զբաղվող կազմակերպությունների և մասնագետների ողջ Եվրոպայից: Սա հիանալի հնարավորություն էր Հայաստանի մասնագետների համար քննարկելու պալիատիվ խնամքի բնագավառում երկրում առկա խնդիրները, ի ցույց դնել ամենավերջին զարգացումները և նորարար մոտեցումներ ձեռք բերել այդ բնագավառում: “Ողջ միջոցառումը չափազանց լավն էր”, ասաց բժիշկ Նարինե Մովսիսյանը Երևանի պետական բժշկական համալսարանից, նաև Պալիատիվ խնամքի աշխատանքային խմբի անդամ: “Այն լայնամասշտաբ էր, որտեղ ներկա էին դաշտի լավագույն մասնագետները: Մենք ուրախ ենք, թե ինչպես կարողացանք ներկայացնել Հայաստանը և մտքեր փոխանակել մեր արտասահմանցի գործընկերների հետ”:

Շաբաթներ անց, հունիսի 9-ին, ՀՀ առողջապահության փոխնախարար Սերգեյ Խաչատրյանը Նյու Յորքում խոսեց ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի մասին ՄԱԿ-ի բարձրաստիճան ժողովում: Նա հատկապես շեշտեց կառավարության պատրաստակամությունը ցավի կառավարման համար օփիոիդների մատչելիությունը բարելավելու առումով: “Մենք պետք է միասին աշխատենք՝ հեռացնելու գերսահմանափակող իրավական և կանոնադրական խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս մատչելի դարձնել վերահսկվող դեղամիջոցները նրանց համար, ովքեր դրանց կարիքն ունեն ցավը մեղմելու համար”, ասաց նա: Պարոն Խաչատրյանը ավարտեց իր խոսքը՝ վերահաստատելով ամբողջական պալիատիվ խնամքի կարևորությունը և վստահություն հայտնեց, որ այս ժողովը կօգնի ճանապարհի հարթել դեպի որակյալ առողջապահական խնամք ՄԻԱՎ-ով ապրող անձանց համար, “ներառյալ ֆիզիկական, հոգևոր, հոգեբանա-սոցիալական, սոցիալ-տնտեսական, իրավական, սննդային և պալիատիվ խնամքի ծառայություններ”:

Այժմ, քաղաքական կամքի առկայության դեպքում, պարտադիր է խոսքերը գործ դարձնել: Հայաստանի Ցավի վերահսկման և պալիատիվ խնամքի ասոցիացիայի նախագահ, բժիշկ Հրանտ Կարապետյանը հուսով լի է Հայաստանում պալիատիվ խնամքի ապագայի վերաբերյալ: “Ես լավատես եմ”, ասաց նա, - այս բնագավառում աշխատելու համար լավատես պետք է լինել: Կարծում եմ՝ պալիատիվ խնամքի առումով ապագան հույսեր է ներշնչում Հայաստանում, քանի որ ի շնորհիվ մեր գնահատման ակնհայտ է, որ ներկայումս կարիքը մեծ է, և քաղաքականություն մշակողները արձագանքում են այդ կարիքին:

Հայաստանում ամենամեծ խնդիրը արդյունավետ պալիատիվ խնամքի համակարգի հիմնման համար, ինչպես նշեց փոխնախարարը, ցավի վերահսկման դեղերի առկայությունն ու մատչելիությունն է: ԲՀՀ - Հայաստանը սերտ համագործակցում է կառավարության և քաղաքացիական հասարակության հետ՝ ապահովելու այս հիմնարար իրավունքը բոլոր հայաստանցիների համար: ■

Parliamentmonitoring.am. Ազգային ժողովի քվեարկությունների տվյալները և կուսակցությունների՝ իրենց նախընտրական խոստումներին հավատարիմ մնալը ճշտելու նոր ինտերնետային կայք

Մայիսի 18-ին Մանդատ ՀԿ-ն ներկայացրեց իր երրորդ զեկույցը Ազգային ժողովի օրենսդրական գործունեության մոնիթորինգի մասին: Չեկույցը, որն ընդգրկում էր ԱԺ 2009թ. աշնանային և 2010թ. գարնանային նստաշրջանները, պատրաստվել է ԲՀՀ - Հայաստանի օժանդակությամբ: Քաղաքական կուսակցությունների, լրատվամիջոցների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները ներկա էին միջոցառմանը:

Չեկույցը քննարկելուց հետո ծրագրի ղեկավար Լուսինե Վասիլյանը ներկայացրեց [www.parliamentmonitoring.am](http://www.parliamentmonitoring.am)

ամ կայքը, որը տվյալներ է պարունակում քաղաքական կուսակցությունների և ԱԺ պատգամավորների քաղաքական գործունեության մասին՝ դրանք հասու դարձնելով հասարակությանը: Այն գրանցում է քվեարկությունների պատկերը, բացակայությունները և թե ինչ չափով են քաղ. կուսակցությունները կատարում իրենց նախընտրական ծրագրերը: Տվյալները սինթեզվում են ՀՀ ԱԺ [www.parliament.am](http://www.parliament.am) պաշտոնական կայքում հասանելի տեղեկություններից:

Ինչպես Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ից Վարուժան Հոկտանյանն ասաց. “Եվ զեկույցը, և կայքը կարևոր տեղեկություններ են տրամադրում քվեարկողներին էական հարցերի և իրենց կողմից ընտրված ԱԺ պատգամավորների գործողությունների շուրջ: Իսկ որ ամենակարևորն է, մնան ծրագրերը նպաստում են պատգամավորների կողմից տրված խոստումների և գործողությունների միջև համապատասխանության հասնելուն ու պահպանելուն”:

“ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ” ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Ընտրական օրենսգրքի փոփոխությունների շուրջ քննարկման մասնակիցները մտահոգություն են հայտնում ազատ և արդար ընտրությունների խոչընդոտների շուրջ

Ապրիլի 11-ին Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնությունը քննարկում կազմակերպեց “Ընտրական օրենսգրքի փոփոխությունները. Նոր երաշխիքներ ազատ և արդար ընտրությունների համար” վերնագրով: Միջոցառմանը ներկա էին կառավարության ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավորներ, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննարկման կիզակետն էր ընտրությունների հետ կապված արատավոր պրակտիկան, առաջարկված օրենսդրական փոփոխությունները և դրանց արդյունավետությունը՝ ընտրությունների ողջ ընթացքում սխտեմատիկ խախտումները լուծելու համար:

Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ) պաշտամենտական խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը նշեց, որ և ՀՅԴ-ն, և Ժառանգություն կուսակցությունը հրավիրվել էին մասնակցել ընտրական օրենսգրքի փոփոխությունների աշխատանքային խմբում, սակայն հրաժարվել են, քանի որ հրավերքը ստացվել էր այն ժամանակ, երբ հնարավոր էր միայն մանր փոփոխություններ կատարել: ՀՅԴ-ն տասնմեկ առաջարկ էր պատրաստել ընտրական օրենսգրքի բարելավման համար, որոնք ուղարկվել էին Վեներտիկի հանձնաժողով՝ սահմանադրական հարցերով Եվրախորհրդի խորհրդատվական մարմին: Պարոն Հովհաննիսյանը հատկապես շեշտեց թափանցիկության կարևորությունը և առաջարկեց բաց դարձնել քվեարկողների ցուցակները՝ քվեաթերթիկները հաշվելիս կեղծումներից զերծ մնալու համար:

Միջոցառման ընթացքում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները նշեցին մի շարք հարցեր, որոնք շարունակաբար խոչընդոտում են Հայաստանում ազատ և արդար ընտրությունների անցկացմանը: Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը քննադատեց հեռուստաընկերություններին՝ քաղաքական բոլոր կուսակցություններին հավասար հնարավորություններ չընձեռելու համար, իսկ “Ասպարեզ” լրագրողական ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանը կիսեց իր փորձառությունը որպես մոնիթոր՝ խոսելով ընտրատեղամասերում կատարվող մեծ խախտումների մասին, որոնցից են կրկնակի քվեարկությունը, քվեարկողներին ահաբեկելը և կեղծումները:

Քննարկման վերջում պատրաստվեց հաղորդագրություն, որտեղ ամփոփվեցին քաղաքացիական հասարակության հիմնական մտահոգությունները Հայաստանում ներկայումս առկա ընտրական պրակտիկաների և Ընտրական օրենսգրքի փոփոխությունների գործընթացի շուրջ: Հաղորդագրությունը կարելի է գտնել Գործընկերության կայքում <http://www.partnership.am/en/Statements/38380>. ■



Ընտրական օրենսգրքի փոփոխությունների մասին արդյունավետ քննարկում, 2011թ. ապրիլ

## Վարչական դատարանի մոնիթորինգի զեկույցը առաջարկներ է ներկայացնում օրենսդրական փոփոխությունների համար

Անցյալ տարվա ընթացքում Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ն ԲՀՀ - Հայաստանի օժանդակությամբ դիտարկել է ՀՀ Վարչական դատարանի գործունեությունը, որի արդյունքները զետեղվել են զեկույցում: Ապրիլի 19-ին Գործընկերություն հանուն բաց հասարակության մախաձեռնությունը ներկայացրեց սույն զեկույցը:

Իր բացման խոսքում Հայաստանի Պետհամալսարանի իրավաբանության դոցենտ և ԲՀՀ – Հայաստանի տնօրենների խորհրդի գործող նախագահ Հրայր Ղուկասյանը մատնանշեց մոնիթորինգի կարևորությունը որպես գործիք քաղաքացիական հասարակության համար, հատկապես վարչական արդարադատության ոլորտում: “Մոնիթորինգը խնդիրներ վերհանելու և լուծելու լուրջ եղանակ է, ինչպես նաև էմպիրիկ հետազոտության լավ մեթոդ”, - ասաց պարոն Ղուկասյանը: “Հաճախ մենք ունենում ենք վատ կիրառվող լավ օրենքներ, և մոնիթորինգն օգնում է կամրջել այդ բացը”:

Ձեկույցի հեղինակ և հիմնական ներկայացնող Սիրանուշ Սահակյանը, Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ից ընդունեց, որ 2008թ. Վարչական դատարանի հիմնադրումը առաջընթաց քայլ էր Հայաստանի արդարադատության համակարգը բարելավելու համար:

Սակայն զեկույցը բացահայտել է մի շարք օրենսդրական թերություններ և անհարիր կիրառություններ:

Արդարադատության փոխնախարար Արամ Օրբելյանը ներկաներին տեղեկացրեց, որ զեկույցում նշված հարցերից որոշները ներկայումս արդեն իրենց լուծումն են գտնում օրենսդրական փոփոխությունների փաթեթի միջոցով, որոնք ներկայացվել են Ազգային ժողով:

Ներկայացումից հետո ՀԿ-ների ներկայացուցիչները և իրավաբաններն իրենց տեսակետները քննարկեցին Հայաստանում վարչական օրենսդրության վերաբերյալ: Մասնակիցները հարցականի տակ դրեցին Վարչական դատարանի օբյեկտիվությունը և մտահոգություն հայտնեցին այն փաստի կապակցությամբ, որ կառավարությունը կարող է զանազան ճանապարհներով հեշտությամբ իրավական գործողություններ ձեռնարկել քաղաքացիների դեմ, մինչդեռ քաղաքացիները միայն կարող են գործողություններ ձեռնարկել վարչական մարմինների դեմ սահմանափակ դեպքերում, այն էլ որոշ պայմանների առկայության դեպքում:

Արդարադատության նախարարությունը շարունակելու է քննարկումները կապված մոնիթորինգի զեկույցի հետ, և մասնակիցները հուսով են, որ այնտեղ նշված առաջարկությունները հաշվի կառնվեն օրենսդրական փոփոխությունների փաթեթը վերջնականացնելիս: ■

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

### Սմարթֆոններն ավելի խելացի են դարձել...

Դրանք հայերեն են սովորել: Մայիսի 4-ին Կոնգրես հյուրանոցում hy-AM.org կազմակերպության ներկայացուցիչները, որոնք ակտիվիստների խումբ են և աշխատում են տեղեկատվական տեխնոլոգիաների մեջ հայերեն լեզվի ներմուծման ուղղությամբ, ներկայացրեցին այն ծրագիրը, որն այս ամենը հնարավոր դարձրեց: Ներկաների շարքում էին համացանցի ակտիվիստներ, լեզվաբաններ, կառավարության, մասնավոր հատվածի և լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

“Հայերեն լեզու սմարթֆոնների համար” ծրագիրը, իրականացված լինելով hy-AM.org-ի կողմից, ԲՀՀ - Հայաստանի ֆինանսական աջակցությամբ, նպատակ էր հետապնդում բարելավել տեղեկատվության հասանելիությունը հայերեն լեզվով: Որպես արդյունք՝ վեր կայքեր, էլեկտրոնային գրքեր և հայերեն տառատեսակներով այլ ֆայլեր ներկայումս մատչելի են համարյա բոլոր սմարթֆոնների վրա:

“Մինչ այժմ, եթե փորձեիր սմարթֆոնների մեծ մասի վրա հայերեն գրված ինչ-որ բան բացել, քառակուսիներ էին հայտնվում”, - ասաց ծրագրի համակարգող Ալեքսեյ Չալաբյանը: “Այժմ հնարավոր է հայերեն կարդալ Andriod, Maemo, Meego, Symbian և Windows Mobile օպերացիոն համակարգերով աշխատող հեռախոսների վրա: Նաև հնարավոր է գրել հայերեն տառատեսակներով նշված բոլոր

օպերացիոն համակարգերի վրա, բացի Symbian-ից”:

Այս ծրագրի շնորհիվ մի քանի հայերեն տառատեսակներ են մշակվել, որոնք կարող են հեշտորեն տեղադրվել՝ կիրառելով հատուկ նախագծված տեղակայման փաթեթներ, որոնք կարելի է գտնել <http://hy-am.org> կայքում: Դրանք տրամադրվում են անվճար և հիմնված են բաց կոդով տեխնոլոգիայի վրա, որը հնարավորություն է տալիս ծրագիրը հեշտ կիրառել, տարածել և էլ ավելի զարգացնել: ■



Սմարթֆոնների ծրագրում հայերեն լեզվի ներմուծումը, 2011թ. մայիս

**Տասը հասարակական կազմակերպություն կստանան աջակցություն՝ ռազմավարական դատավարության միջոցով քաղաքականության բարելավման համար**

Այս գարնանը Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ռազմավարական դատավարության ծրագիրն անցկացրեց մրցույթ՝ ուղղված իրավունքների պաշտպանությանը գրադվող ՀԿ-ների իրավական կարողությունների ամրապնդմանը: Հայտատուները ներկայացրել էին ծրագրեր, որոնք պահանջում էին ռազմավարական դատավարության հարցում իրավական աջակցություն և փորձառություն: Դիմել էր երեսուց կազմակերպություն և չնայած, որ ի սկզբանե նախատեսվում էր ընտրել երեքից չորս կազմակերպություն, կախված հայտի որակից և հայտում արժարժված կարիքների բազմազանությունից, ընտրվեց տասը ՀԿ: Նրանցից յուրաքանչյուրին կտրամադրվի մոտ 15,000 ԱՄՆ դոլար՝ իրենց ծրագրերի իրականացման համար:

Ընտրված կազմակերպությունները ներկայացնում են տարբեր ոլորտներ, այդ թվում՝ բնապահպանություն, հաշմանդամություն, կանանց իրավունքներ, սոցիալական իրավունքներ, խոսքի ազատություն: Կազմակերպությունների իրավական կարողությունները կհզորացվեն ծրագրի միջոցով, մասնավորապես՝ ներգրավելով տեղական իրավաբաններին, որոնք կնախաձեռեն ռազմավարական դատավարություն և կմասնագիտանան յուրաքանչյուր կազմակերպության կարիքներին հատուկ իրավաբանական խորհրդատվության հարցերում:

Որպես լրացուցիչ աջակցություն՝ կլինեն վերապատրաստման շարունակական դասընթացներ, սեմինարներ և խորհրդատվություն, այդ թվում՝ հուլիսին նախատեսված ռազմավարական դատավարության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերյալ վերապատրաստման դասընթացը: Դասընթացը կանցկացնի Միջազգային պաշտպանության կենտրոնի (Մոսկվա) ներկայացուցիչը: ■

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

**ԲՀՀ - Հայաստանը աջակցում է բավանդակալից, խնդիրներից բխող ծրագրերի**

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանը շարունակում է աջակցել հեռուստաընկերություններին և առցանց լրատվամիջոցներին՝ խրախուսելով նրանց թողարկել բանավեճային ծրագրեր և թոք շոուներ հանրապետության քաղաքական, տնտեսական և սոցիալական հարցերի շուրջ: Այս կարգի ծրագրերը կարող են հեռուստադիտողների համար հանդիսանալ տեղեկությունների այլընտրանքային աղբյուր՝ առաջարկելով որակի այնպիսի աստիճան, ինչպես բովանդակության, այնպես էլ ձևաչափի առումով, որ ընդհանուր առմամբ չկա Հայաստանի լրատվամիջոցներում:

Այս գարնանը ԲՀՀ - Հայաստանը բանավեճային ոճի այլընտրանքային ծրագրերի պատրաստման և հեռարձակման համար ծրագրային հայտեր ներկայացնելու հայտարարություն էր տվել: Մայիսին շատ մրցունակ գործընթացով Խորհուրդը որպես հաղթող ընտրեց տեղական հինգ հեռուստաընկերություն Հայաստանի տարբեր շրջաններից: Լոռի, Ալտ, Քյավառ, Մոսի և Մենք այլուս ՀԿ (Ցայգ հեռուստաընկերության միջոցով) տեղական հեռուստաընկերություններին տրամադրվեց ֆինանսավորում, որպեսզի պատրաստեն ծրագրեր, որոնք անդրադառնում են այնպիսի առաջնահերթ հարցերի, ինչպիսիք են մարդու իրավունքները, մամուլի ազատությունը, արդարադատության մատչելիությունը, կրթությունը, հանրային առողջությունը և իրենց մարզերին ու ընդհանրապես հանրապետությանը բնորոշ խնդիրները: Ծրագրերը կտեղադրվեն նաև հեռուստաընկերությունների կայքէջերում:

“Երկիր մեղիա” հեռուստաընկերությունը, որը համազգային ծածկույթ ունի, նույնպես հաղթողների շարքում էր և “Հետք – հետաքննող լրագրողներ” թերթի հետ համագործակցությամբ կպատրաստի կարճ, թեմատիկ փաստագրական ֆիլմեր և

կհեռարձակի դրանք “Հրապարակ” ծրագրով, որին կհաջորդի Հայաստանում խոշոր խնդիրների շուրջ քննարկումը ուղիղ եթերում:

Առցանց կայացած հնարավորություններ ունեցող երկու լրատվական ընկերություններ՝ A1plus.am և 1in.am, հաղթող ճանաչվեցին առցանց դասակարգում: Նրանց ֆինանսավորում կտրամադրվի, որպեսզի պատրաստեն սոցիալական պահանջներին համապատասխան որակյալ առցանց ծրագրեր: ԲՀՀ - Հայաստանը աջակցել է Ա 1+-ին, երբ նրանք սկսում էին Հայաստանում լուրերի իրենց առցանց լուսաբանումը 2010թ. և շահագրգռված է, որպեսզի ավելի մեծ թվով լրատվամիջոցներ՝ ինչպես առցանց, այնպես էլ ավանդական, ձևավորեն առողջ մրցակցային միջավայր, որը խթանում է բազմակարծությունը: ■

**Լրատվամիջոցների դեմ դատական գործերի աճ, ըստ ԽԱՊԿ-ի եռամսյակային զեկույցի**

Ապրիլի 12-ին Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն (ԽԱՊԿ) հրապարակեց 2011թ. իր առաջին եռամսյակային զեկույցի արդյունքները: Չեկույցը ներկայացնում է տնտեսական և իրավական միջավայրը, որում գործել են լրատվամիջոցները, ինչպես նաև լրագրողների նկատմամբ ոստիկանությունների դեպքերը 2011թ. հունվարից մարտ ընկած ժամանակահատվածում:

ԽԱՊԿ-ն չի արձանագրել լրագրողների դեմ ֆիզիկական բռնության որևէ դեպք այս ժամանակահատվածի ընթացքում: Մակայն նրանք նկատել են լրատվամիջոցների նկատմամբ ճնշման դեպքերի զգալի աճ: Արձանագրված 15 դեպքից հինգը եղել են խմբագրությունների և լրագրողների դեմ

սպառնալիքների տեսքով, իսկ տասը՝ եղել են լրատվամիջոցների դեմ գրպարտության և վիրավորանքի համար հարուցված գործեր: Դատական գործերի թիվն աննախադեպ էր:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանը գնահատումն ամփոփել է հետևյալ կերպ. "Լրատվամիջոցների դեմ դատական գործերի այս արշավի պատճառը ոչ միայն նրանց հրապարակումներում տեղ գտած գրպարտությունն ու վիրավորանքն է, այլ ավելի շուտ քննադատության հանդեպ անհանդուրժողականությունը,

և հակահարվածի ռազմավարությունն ընտրելը: Բանավեճի մրցույթը մեծ հաջողություն ունեցավ, և այն հետագայում շարունակություն կունենա:

ԲՀՀ – Հայաստանի աջակցությամբ ԽԱՊԿ-ն կշարունակի հետևել ոլորտի իրավիճակին և կիրառարակի եզրահանգումները իր եռամսյակային զեկույցներում: 2011թ. առաջին եռամսյակային զեկույցի տեքստն ամբողջությամբ տեղադրված է նրանց կայքում՝ [www.khosq.am](http://www.khosq.am): ■

## ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

### Պատանեկան բանավեճի մրցույթը նպաստում է քննադատական մտածողությանը և ճկուն ուսմանը

Մայիսի 30-ին Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանը Երևանում կազմակերպեց պատանեկան բանավեճի մրցույթ՝ որպես Հայկական բանավեճի ծրագրի մաս: Մրցույթին մասնակցեցին վեց բանավեճի ակումբ Երևանից և մարզերից: Թիմերը շատ լավ էին պատրաստվել, ինչը հիացրեց դատավորներին, միևնույն ժամանակ բարդացնելով նրանց գործը: Մրցույթը հաղթեց Մեծամորի թիվ 1 դպրոցի "ArmBrain" թիմը, որին հաջորդեց Արատտա թիմը Երևանից:

Մրցույթի թեմաներից էին կոռուպցիան, կրթությունը, մահապատիժը և տնտեսական զարգացումն որպես հակադրություն շրջակա միջավայրի ոչնչացման: Ինչպես մի աշակերտ նշեց Արատտա թիմից, մրցույթը շատ անգիջում էր, սակայն մասնակիցները շատ բան սովորեցին և բավականություն ստացան մյուս դպրոցների իրենց հասակակիցներին հանդիպելուց:

Մրցույթից հետո բանավեճի վերապատրաստման դասընթացներ անցկացվեցին մարզիչների և աշակերտների համար: IDEA-ի (Բանավեճի կրթության միզագալիին ասոցիացիա) վերապատրաստողները այնպիսի վարժություններ էին նախապատրաստել, որոնք օգնում էին որոշակի հմտությունների բարելավմանը, ներառյալ բանավեճին պատրաստվելը, սեփական տեսակետը կառուցելը

և հակահարվածի ռազմավարությունն ընտրելը: Բանավեճի մրցույթը մեծ հաջողություն ունեցավ, և այն հետագայում շարունակություն կունենա:

Հայկական բանավեճի ծրագիրը նախաձեռնվել է ԲՀՀ - Հայաստանի կողմից Բաց հասարակության երիտասարդական ծրագրի օժանդակությամբ: Ծրագրի նպատակն է պատանիներին ներգրավել խոհեմ, կշռադատված քննարկումներում այնպիսի հարցերի շուրջ, որոնք կարևոր են իրենց և իրենց համայնքների համար: Այն նաև նպատակ ունի խթանել բանավեճի կիրառումը դպրոցներում, երիտասարդական ակումբներում, համայնքային կենտրոններում և ՀԿ-ներում որպես ուսուցման ճկուն միջոց: ■



Արատտա թիմի երիտասարդները մասնակցում են անխնայից բանավեճին, 2011թ. մայիս

## ԱՐԵՎԵԼԸ-ԱՐԵՎԵԼԸ ԾՐԱԳԻՐ

### Կույրերի համար վերականգնողական կենտրոն բացելու ուղղությամբ տարվող աշխատանքներ. Լեհաստանի և Վրաստանի փորձագետների այցը Հայաստան

Հասարակության մեջ կույրերի ինտեգրման և լիարժեք կյանք վարելու խթանման հարցում վերականգնողական կենտրոնները կարևոր դեր են խաղում: Ներկայումս Հայաստանում կա ավելի քան 12000 կույր, սակայն չկա և ոչ մի վերականգնողական կենտրոն: Հայաստանում կույրերի համար վերականգնողական կենտրոնի ստեղծումը "Ինքնուրույնություն. Հայաստանում, Վրաստանում և Լեհաստանում հաշմանդամների համար օգնության և աջակցության ստեղծում" անվամբ ծրագրի երկարաժամկետ նպատակներից մեկն է:

Ծրագիրը ստեղծվել է "Հանգրվան" ՀԿ-ի կողմից՝ Արևելք-Արևելք գործընկերություն սահմաններից այն կողմ ծրագրի աջակցությամբ: Այն իրականացվեց ճանաչողական այցերի եռափուլ շարքի ձևով: Յուրաքանչյուր փուլ տեղի էր ունեցել մասնակից երկրներից որևէ մեկում: Առաջին փուլը տեղի ունեցավ Լեհաստանում, երկրորդը՝ Հայաստանում, իսկ երրորդը՝ Վրաստանում: Գնահատողական այցի հայկական հատվածը տեղի ունեցավ մայիսի 1-ից 10-ը: Կույրերի համար նախատեսված վերականգնողական կենտրոններում աշխատող և համապատասխան ՀԿ-ների քսան փորձագետ Լեհաստանից և Վրաստանից այցելեցին հանրապետության տարբեր մասերում գտնվող կույրերի համար նախատեսված կենտրոններ և հաստատություններ: Նրանք կիսեցին վերականգնողական կենտրոնների մասին իրենց փորձն ու գիտելիքները և ստեղծեցին Հայաստանում համախոհ անձանց

ու կազմակերպությունների ցանց: Այս այցի ընթացքում Գյումրիի քաղաքապետը խոստացավ տարածք հատկացնել կույրերի համար նախատեսված Հայաստանի առաջին

վերականգնողական կենտրոնի համար, որը ծրագրի համար խոշոր ձեռքբերում է:



Հայաստանի, Վրաստանի և Լեհաստանի մասնակիցները քննարկում են կույրերի վերականգնողական խնամքը, 2011թ. մայիս

Ճանաչողական այս այցի ընթացքում գիտելիքների փոխանցումը և տեղի ունեցած քննարկումները օգտակար էին ներգրավված բոլոր կողմերի համար: Լեհաստանի մասնակիցները կիսեցին իրենց փորձը՝ կապված վերջերս իրենց կողմից վերականգնողական կենտրոնների ամերիկյան մոդելին ինտեգրվելու հետ, որը ներառում է վերականգնողական կրթության դասընթացներ, արվեստի թերապիա, կողմնորոշման և ամենօրյա խնամքի հմտություններ: Որպես հաջորդ քայլ՝ հայ փորձագետների մի փոքր խումբ սեպտեմբերին կմեկնի Լեհաստան, որտեղ նրանք կմասնակցեն սեմինարի և կվերապատրաստվեն որպես ուսուցանողներ Հայաստանի ապագա վերականգնողական կենտրոնի համար: ■

### ՀԱԿԱՆԳՆԱԺԱՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գյուղացիական ութ կոոպերատիվներ ստանում են դրամաշնորհներ Ջինիշյանի հիշատակի հիմնադրամի և ԲՀՀ - Հայաստան գործընկերության միջոցով

համար: Դրամաշնորհների տրամադրումը հնարավոր դարձավ Ջինիշյանի հիշատակի հիմնադրամի հետ համատեղ, որը տրամադրեց 27,000 ԱՄՆ դոլար, իսկ ԲՀՀ - Հայաստանը՝ համաֆինանսավորեց 25,000 ԱՄՆ դոլարով:

ԲՀՀ - Հայաստանը շարունակում է իր աջակցությունը գյուղացիական կոոպերատիվներին տնտեսական ճգնաժամի հետևանքները հաղթահարելու հարցում, որը հատկապես կործանարար է գյուղացիական տնտեսությունների համար՝ գյուղատնտեսության ոլորտում վերջերս տեղի ունեցած անկման պատճառով: 2011թ. մարտից մայիս ընկած ժամանակահատվածում “Արագ ազդեցության դրամաշնորհներ գյուղացիներին” ծրագիրը դրամաշնորհներ է տվել գյուղացիական ութ կոոպերատիվների: Ծրագրի շնորհիվ 349 գյուղացի ստացել է 350-ական կիլոգրամ ազոտական պարարտանյութ, ինչը նրանք համարում են ամենազերակա հարցը՝ գյուղատնտեսական սեզոնը սկսելու

### Ճամբարակի բարեգործական ճաշարանը կրկին բացում է իր դռները

Անցած տարի “Համաշխարհային ճգնաժամ. Ընդհանուր սոցիալական պատասխանատվություն Հայաստանում ռիսկային խմբերին աջակցելու հարցում” անվամբ ծրագրի շնորհիվ Հայաստանում գործում էր 24 հասարակական բարեգործական ճաշարան: Ծրագիրն իրականացվում է “Առաքելություն Հայաստան” կազմակերպության կողմից և ֆինանսավորում է ստացել ԲՀՀ – Հայաստան կազմակերպությունից, ԱՄՆ ՄՁԳ-ից և ՀՀ Կառավարությունից:

2011թ. հունվարին ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորումն ավարտվեց, իսկ կառավարությունից ֆինանսավորում չտրամադրվեց՝ բյուջետային կրճատումների պատճառով: Ֆինանսավորման այս զգալի կրճատման պատճառով “Առաքելություն Հայաստան” կազմակերպությունը ստիպված էր ժամանակավորապես կասեցնել բարեգործական մի քանի ճաշարանների աշխատանքը, որոնցից մի քանիսը դրանից հետո վերաբացվել են:

Բոլորովին վերջերս Ճամբարակում գտնվող “Պրիմ” ՀԿ-ի գլխավորությամբ իրականացվող նախաձեռնության շնորհիվ և ԲՀՀ - Հայաստանի, “Առաքելություն Հայաստան” ՀԿ-ի և Ճամբարակի համայնքի աջակցությամբ իր դռները վերաբացեց Ճամբարակի բարեգործական ճաշարանը: Բարեգործական ճաշարանի փակումը, որը սպասարկում էր խիստ խոցելի 60 շահառուների, կործանարար ազդեցություն է ունեցել համայնքի



Արևիկ գյուղացիական կոոպերատիվի անդամը ցույց է տալիս նոր պարարտացված իր բերքը, 2011թ. ապրիլ

վրա: Բարեբախտաբար, Հակաճգնաժամային հիմնադրամի հատկացրած 8,000 ԱՄՆ դոլար դրամաշնորհի և 5,300 ԱՄՆ դոլարի համաֆինանսավորման միջոցով Ճամբարակի բարեգործական ճաշարանը կրկին ճաշ է մատուցում ամեն օր և սոցիալական ծառայություններ տրամադրում համայնքի կարիքավոր անդամներին:

**ԲՀՀ-Հայաստանը աջակցություն է տրամադրում պրոֆեսիոնալ կույր երաժիշտներին**

1976 թվականից Հայաստանի կույրերի միավորման երաժշտական համույթը երկրով մեկ հիացնում է հանդիսատեսին և մեծապես քաջալերել է հաշմանդամների առաջխաղացումը: Համույթն այժմ ունի 45 անդամ, այդ թվում՝ երաժիշտները և երգչախումբը:

Ֆինանսական ճգնաժամի պատճառով համույթն այս տարի որևէ ֆինանսավորում չի ստացել և ֆինանսական միջոցների խիստ կարիք ուներ: Աշխատավարձը չէին կարողանում վճարել, հետևաբար, անդամները ամիսների շարունակ հարկադիր պարապուրդի մեջ էին: Արձագանքելով այս հրատապ կարիքին՝ ԲՀՀ - Հայաստանը Հակաճգնաժամային հիմնադրամի միջոցով տրամադրեց 13,520 ԱՄՆ դոլարի դրամաշնորհ, որը հնարավորություն կտա շահառուներին շարունակել աշխատանքը և կազմակերպել համերգ՝ նվիրված համույթի 35-ամյակին:

Հայաստանի կույրերի միավորման երաժշտական համույթի

տնօրեն Սիմոն Հովհաննիսյանը մի շարք բարձր պարգևներ, այդ թվում “Արվեստի ականավոր գործչի” պարգև, կառավարության կողմից “Մովսես Խորենացու” շքանշան և ՀՀ կրթության նախարարության ոսկե շքանշան ստացած ականավոր կույր կոմպոզիտոր է: Նա իր խորին երախտագիտությունը հայտնեց ԲՀՀ - Հայաստանին, ընդգծելով, որ կույր երաժիշտները միայն աղքատիկ նպաստի հույսին են և սրտանց հաճույք են ստանում իրենց գործից: Համույթի աշխատանքը խիստ կարևոր է նրա անդամների սոցիալական ինտեգրման, անկախության և ընդհանուր բարեկեցության առումով:▪



Կույրերի միության երաժշտական համույթը ելույթ է ունենում 2010թ.

**ANNOUNCEMENTS**

**Call for Proposals: Strengthening Civil Society Through Arts & Culture**

The Arts and Culture Program works at the nexus of arts, culture, human rights, and social advocacy. Through its grants, the program strives to encourage broad-based critical reflection and catalyze social action in parts of the world where open societies are absent or weak, and where the cultural rights of minority groups are endangered.

In particular, the program provides grants to strengthen alternative and autonomous cultural infrastructures and innovative arts initiatives in Central Asia, the Caucasus, Afghanistan, Moldova, Mongolia, and Turkey.

Applications will be accepted on an ongoing basis through December 31, 2012.

For detailed information, please view the Strengthening Civil Society Through Arts & Culture proposal guidelines.

Հասցե՝ Թումանյան փ. 2-րդ փակուղի, տուն 7/1  
 Երևան 0002, Հայաստան  
 Հեռ./Ֆաքս՝ +37410 533862; 536758  
 Էլ. փոստ՝ info@osi.am  
 Վեբ կայք՝ www.osi.am, www.partnership.am